Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

9 նոյեմբերի 2017 թվականի N 47

---

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի ՆԻՍՏԻ N 10 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 4-ՐԴ ԿԵՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 17-ի նիստի N 10 արձանագրության 4-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. նոյեմբերի 14

Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
նոյեմբերի 9-ի նիստի N 47
արձանագրային որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2016 թ.
մարտի 17-ի նիստի N 10
արձանագրային որոշման

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՒՅՑ

Պատվաստանյութի անվանումը	Պատվաստման հերթական դեղաչափը	Պատվաստման ժամկետը	Հիվանդությունների հակածինների պարունակությունը պատվաստանյութում
ՎՀԲ	1	ծնվելուց հետո՝ 0-24 ժամվա ընթացքում	Հեպատիտ Բ՝ մանկական
ԲՑԺ	1	ծնվելուց հետո՝ 0-48 ժամվա ընթացքում	Տուբերկուլոզ
ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ	1	6 շաբաթական	Դիֆթերիա, փայտացում, կապույտ հազ, հեպատիտ Բ, հեմոֆիլուս ինֆլուենզա Բ տիպի՝ համակցված /թույլատրվում է նաև տվյալ տարիքի համար այլ հակածինների հետ համակցված/
ՕՊՊ			Պոլիոմիելիտ ՝ բերանային երկվալենտ /1 և 3րդ տիպեր/
ՌՈՏԱ			Ռոտավիրուսային
ՊՆԵՎՄՈ			Պնևմակոկային – 13 վալենտ

ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ	2	12 շաբաթական	Դիֆթերիա, փայտացում, կապույտ հազ, հեպատիտ Բ, հեմոֆիլուս ինֆլուենզա Բ տիպի՝ համակցված /թույլատրվում է նաև տվյալ տարիքի համար այլ հակածինների հետ համակցված/
ՕՊՊ			Պոլիոմիելիտ՝ բերանային երկվալենտ /1 և 3րդ տիպեր/
ՌՈՏԱ			Ռոտավիրուսային
ՊՆԵՎՄՈ			Պնևմակոկային – 13 վալենտ
ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ	3	18 շաբաթական	Դիֆթերիա, փայտացում, կապույտ հազ, հեպատիտ Բ, հեմոֆիլուս ինֆլուենզա Բ տիպի՝ համակցված /թույլատրվում է նաև տվյալ տարիքի համար այլ հակածինների հետ համակցված/
ՕՊՊ			Պոլիոմիելիտ՝ բերանային երկվալենտ /1 և 3րդ տիպեր/
ՊՆԵՎՄՈ			Պնևմակոկային 13 վալենտ
ԻՊՊ	1	24 շաբաթական	Պոլիոմիելիտ՝ ինակտիվացված /1, 2րդ և 3-րդ տիպեր/
ԿԿԽ	1	12 ամսական	Կարմրուկ, կարմրախտ, խոզուկ՝ համակցված
ԱԿԴՓ	4	18 ամսական	Դիֆթերիա, փայտացում, կապույտ հազ՝ համակցված /թույլատրվում է նաև տվյալ տարիքի համար այլ հակածինների հետ համակցված/
ՕՊՊ	4	18 ամսական	Պոլիոմիելիտ՝ բերանային երկվալենտ /1 և 3-րդ տիպեր/
ԱԴՓ-Մ	1	6 տարեկան	Դիֆթերիա, փայտացում՝ համակցված
ՕՊՊ	5	6 տարեկան	Պոլիոմիելիտ՝ բերանային երկվալենտ

			/1 և 3-րդ տիպեր/
ԿԿԽ	2	6 տարեկան	Կարմրուկ, կարմրախտ, խոզուկ՝ համակցված
ՄՊՎ	1	13 տարեկան	Մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստանյութ
	2	Առաջին դեղաչափից 6 ամիս հետո	
ԱԴՓ-Մ	2	15-16 տարեկան	Դիֆթերիա, փայտացում՝ /թույլատրվում է նաև տվյալ տարիքի համար այլ հակածինների հետ համակցված/
ՄԵՆԻՆԳԱԿՈԿԱՅԻՆ	1	16 տարեկան	Մենինգակոկային քառավալենտ կոնյուգացված
ՊՆԵՎՄՈ	1		Պնևմակոկային 13 վալենտ /կոնյուգացված/
ԿԿԽ			Կարմրուկ, կարմրախտ, խոզուկ՝ համակցված
ՎՀԱ	1	16 տարեկան	Հեպատիտ Ա
	2	Առաջին դեղաչափից 6 ամիս հետո	
ՏՈՒԼԱՐԵՄԻԱՅԻ	1	17 տարեկան	Տուլարեմիա
ԱԴՓ-Մ	3	26-30 տարեկան	Դիֆթերիա, փայտացում՝ համակցված
	4	36-40 տարեկան	
	5	46-50 տարեկան	
	6	56 -60 տարեկան	
ՍԵԶՈՆԱՅԻՆ ԳՐԻՊ	Ըստ հրահանգի	Ռիսկի խմբեր	Սեզոնային գրիպ
ՎՀԲ			Հեպատիտ Բ՝ մեծահասակների համար
ԿԱՏԱՂՈՒԹՅԱՆ		Համաճարակաբանական ցուցումով	Կատաղության

1. Մենինգակոկային, հեպատիտ Ա, պնևմակոկային, ԿԿԽ, տուլարեմիայի պատվաստումները կատարվում են միայն 16-17 տարեկան նախազորակոչային տարիքի անձանց,ինչպես նաև 18-27 տարեկան զորակոչվող չպատվաստված անձանց:

2. 15-16 տարեկանում ԱԴՓ-Մ պատվաստումները կատարվում են բոլորին 1 դեղաչափ:

3. ԿԿԽ պատվաստումները կատարվում են բոլորին միայն 2 դեղաչափ պատվաստում չունեցողներին:

4. Նախազորակոչային տարիքում հեպատիտ Ա-ի դեմ պատվաստումները կատարվում են 2 դեղաչափով՝ առաջին դեղաչափը 0.5 մլ, 16 տարեկանում, երկրորդ դեղաչափը՝ 0.5 մլ, 6 ամիս հետո: Զորակոչային տարիքի պատվաստում չունեցող կամ 1 դեղաչափ ունեցող անձանց կատարվում է 1մլ դեղաչափով:

5. Տուլարեմիայի դեմ պատվաստումները կատարվում են պատվաստանյութի առկայության դեպքում:

6. 15-16 տարեկանի պատվաստումից հետո ԱԴՓ-Մ պատվաստումները կատարվում են ըստ օրացույցի, ինչպես նաև վերջին 10 տարվա ընթացքում չպատվաստված անձանց:

7. Մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստանյութը կատարվում է 2 դեղաչափ՝ առաջին դեղաչափը 13 տարեկանում, իսկ երկրորդը 6 ամիս հետո:

8. Դիֆթերիայի, փայտացման, կապույտ հազի, հեպատիտ Բ-ի, հեմոֆիլուս ինֆլուենզա Բ տիպի և պոլիոմիելիտի պատվաստումներն իրականացվում են նաև տվյալ տարիքի համար նախատեսված պատվաստանյութերով համակցված այլ հակածինների հետ, որոնք ներառված են Պատվաստումների ազգային օրացույցում և առաջարկվում են տվյալ տարիքում՝ առանձին պատվաստանյութի տեսքով:

9. Ինակտիվացված պոլիոմիելիտի բաղադրիչով համակցված պատվաստանյութով առնվազն մեկ դեղաչափ պատվաստման առկայության դեպքում՝ 24 շաբաթականում նախատեսված ԻՊՊ դեղաչափը չի կատարվում:

10. Պատվաստումների ազգային օրացույցում ներառված պատվաստումները կարող են իրականացվել այլ պատվաստանյութերով՝ համակցված այլ հակածինների հետ, որոնք ներառված չեն օրացույցում:» :